

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑՈՒ ՏԱՂԵՐԸ ՊՈՏՈՒՐՅԱՆ Ի
1905 թ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ № 103 ԶԵՌԱԳԻՐԸ

Թ. Մ. Վան Լինթ (Լեյդենի համալսարան)

0. Առաջարան
1. Հրատարակության և ձեռագրի միջև եղած տարբերությունների ցանկ
2. ո- թեմաների ուղղագրությունը
3. զոր և որ-ի գրությունը
4. ն- հոդի օգտագործումը ձեռագրում և Պոտոլյանի հրատարակության մեջ
5. -ը-ի գրությունը
6. յ-ի գրությունը
7. -տ, -գ- գրությունները -գ- և -կ-ի փոխարեն
8. -ու, -ւ, -վ, -ը գրությունները
9. Եզրակացություններ:

0. Կոստանդին Երզնկացու տաղերի մեծամասնությունը պահպանված է բանաստեղծի մահից սակավաթիվ տարիներ հետո՝ 1336 թ. Թավրիզում Ամիր Փոլինի կողմից ընթերցանական ձեռագրի մեջ, որը այժմ որպես № 103 գտնվում է Մխիթարյանների մատենադարանում՝ Վենետիկում:

Այս ձեռագրում և Վենետիկի № 553 ձեռագրի մեջ գտնված բանաստեղծությունները հրատարակած են 1905 թ. հ. Մ. Պոտոլյանի կողմից¹: Կես դար անց, 1962 թ. Արմենուհի Սրապյանը Պոտոլյանի հրատարակության հիմքի վրա, օգտագործելով Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանված տարբերակները, լույս ընծայեց «Կոստանդին Երզնկացի. Տաղեր» անունով դիրքը: Նա հնարավորություն չունեցավ Պոտոլյանի հրատարակությունը ձեռագրի հետ համեմատելու և ստիպված էր ձեռագրի փոխարեն օգտվել Պոտոլյանի հրատարակությունից: Ստորև ներկայացված տեղեկությունները արդյունքն են ձեռագրի տառ առ տառ ստուգման, որ կատարեցինք Վենետիկում, ձեռագիրը ձեռքի տակ ունենալով: Մենք ձեռագրի և Պոտոլյանի հրատարակության միջև եղած տարբերությունները լույս ենք ընծայում այն նպատակով, որ ավելի ստույգ պատկեր ստանանք, թե ինչպիսի միջին հայերենի աշխարհաբարով էր գրում XIII—XIV դարու մի բանաստեղծ: Շնորհակալ լինելով Պոտոլյանին իր արժեքավոր աշխատանքի համար, հույսով ենք, որ այս դիտողությունները կօգնեն վերևը արտահայտված նպատակին հասնելու:

Հոդվածն ունի ինը բաժին: Նրանք նվիրված են առանձին հատուկ քերականական կամ ուղղագրության երևույթներին: Բացի առաջին բաժնից, որը ձեռագրի էջերի կարգով է դասավորված: Անհրաժեշտության դեպքում նշված տարբերությունները կմեկնաբանվեն:

Ձեռագիրը համարյա միշտ առ ունի, Պոտոլյանը տպում է օ, մի տարբերություն, որ ցանկում չի նշված:

¹ Կոստանդին Երզնկացի ժԴ դարու ժողովրդական բանաստեղծ և լույս թերթվածները ուսումնասիրությանը հրատարակեց հ. Մ. Պոտոլյան. Վենետիկ—Ս. Ղազար, 1905:

1. Տարբերությունների ցանկը

Պոստուրյան

Ձեռագիր

64.5 բոյս

60 բոյսը

65.7 հողի յերկրէ

60 հող յերկրէ

Պոստուրյանի ավելացրած ի-ն քանդում է տաղաչափությունը՝ կիսատողը առանց ի ութ վանկ ունի, առաջին կիսատողն էլ ութ, այդպես ստացվում է սովորական տող՝ 4-4-4-4 տաղաչափությամբ: Բայց միայն տաղաչափության օրենքները խախտելուց չէ, որ մեղմում ենք Պոստուրյանի առաջարկած ընթերցումը: Ինչքան էլ տարօրինակ կարող է թվալ, բայց հրատարակիչը ուշադրություն չի դարձրել Աստվածաշնչի տեքստին, որը այսպես է կարդացվում (Մնունդք Բ.7)² «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ»: ձեռագրի մեջ գրվածը ճիշտ է, և փոփոխության կարիք չունի:

66.11 չպահեցիր

62 չպահեցեր

Մինչդեռ ձեռագիրը գրաբարյան ձևն ունի՝ չպահեցեր, Պոստուրյանը միջին և արդի հայերենի ձևն է տպել՝ չպահեցիր: Աստվածաշունչը, իհարկե, -եր ունի (Մն. Գ. 13 դործեցեր):

67.15 ծնունդէն

64 ծնունդն

Նախագաստության քերականությունը ըստ երևույթին պահանջում է բայառական հոլովը, որն էլ Պոստուրյանը տպել է: Նրա մոտ կիսատողը այսպես է՝

Մին Կայէն էր շար ծնունդէն

մինչդեռ ձեռագիրը ունի՝

Մինն Կայէն էր շար ծնունդն

72.33 խորեալ

71 խոցեալ

Ձեռագրի ընթերցումը ճիշտ լինելու մասին կասկած չի կա: Խորեյ բառը այստեղ չի սաղում: Աստվածաշունչը ունի խոցեալ (Յովհ. ԺԹ. 34)³ «Այլ մի ունի ի ղինուորացն տիգաւ խոցեաց ղկողս նորա, և վաղվաղակի ել արին և ջուր»:

72.35 եղաբեր

72 եղաբեր

Պոստուրյանը տպել է բառի գրաբարում ընդունված ձևը: Ձեռագիրը աշխարհաբարի ձևն ունի, որը Պոստուրյանը չի ընդունում և փոխում է մի ավելի դասական ձևի հետ: Այսպես սխալ տպավորություն կստեղծվի: Համեմատենք ՆՔՀԼ 1, էջ 651 և էջ 873—874³: 874-րդ էջում, իսկաբեր բառի տակ, դանում ենք «գրի և իբր ուսմական եղաբեր, -ից»: Նշվում են որպես վկայություններ՝ Գրիգոր Սկևռացի և Ոսկիփոր: Ավելացնելու է՝ Կոստանդին Երզնկացու Վենետիկի № 103 ձեռագիրը:

73.38 քառասունսըն

72 քառասունըս

Ձեռագիրը ունի՝

Մինչև յաւուրս քառասունըս
երեսալ Պետրեան գնդին

² Վիեննա 1929 հրատարակությամբ (նույնն է Պոլիսի 1890 հրատարակությունը. Հ. Ս. Լևնասյան. Հայկական մատենագիտություն. Հ. Բ, Երևան, 1976, էջ 381):

³ Նոր բառարան հայկազեան լեզուի. Վենետիկ, 1836—1837, Երևան, 1979—1981.

Տողի բովանդակությունը գտնում ենք Գործք Ա. 3՝ «Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ շարշարանացն իւրոց ի բազում արուեստս յաւուրս քառասուն երեսի նոցա և ասել վասն արքայութեանն Աստուծոյ»։ Եվ ձեռագիրը և Աստվածաշունչը հոգ շունեն։ Պոտուրյանը –ն հոգն է ավելացրել։ Դրա մասին տեսեք 4-րդ բաժնում։

Ուշագրավ է Աստվածաշնչի և ձեռագրի միջև եղած տարբերությունը։ Ի նկատի ունենք յաւուրս քառասուն (Աստվածաշունչը) և յաւուրս քառասունը (ձեռագիրը)։ Ձեռագիրը թեքված ձևն է օգտագործում, որ թույլատրվում է գրաբարի քերականությամբ։ Դրանից նշանակությունը նույնիսկ փոփոխություն է կրում՝ 40 օրերից այդ հայտնի 40 օր դարձնելով։ Միջին հայերենում դա դարձել է սովորական ձև։

Ձեռագրի և Պոտուրյանի տեքստի միջև եղած տարբերությունից տողի տաղաչափությունը չի փոխվում, եթե հանենք Պոտուրյանի տպած ավելորդը՝ յաւուրս փոխելով յաւուրս, ձեռագրի ուղղագրության համաձայն։ Այսպես տաղաչափությունը (4-4-4-3) պահպանված է։

73.38 յայլ և այլ

73 յայլ և յայլ

Պոտուրյանը այլ և այլ արտահայտությունը ընդունել է որպես շարահյուսական միավոր-միասնություն, որի առջև չ է դրված։ Այնուամենայնիվ ձեռագրի յայլ և յայլ ունենալը պարտադիր չէ որ սխալ լինի։ Նշանակության նուրբ տարբերություն կա՝ այստեղ զանազան լեզուների մասին խոսք լինելն է ավելի շեշտված։

78.7 արգ եղբայրքս սերմանեցէք

80 արգ եղբայրք սերմանեցէք

Ձեռագրի տողը վերջանում է ս-ով, հաջորդ տողը սկսվում է եւմանեցէք-ով, կազմելով սերմանացէք բառը։ Պոտուրյանի եղբայրքս բառում տպած ս-ն ավելորդ է։

78.8 Կոստանդինս

80 Ծս Կոստանդինս և յետին ամիրս

Տաղաչափությունը խախտված լինելու պատճառով Պոտուրյանը հանել է նախադասության առաջին բառը՝ Ծս։ Տողը ամեն դեպքում մաքուր չի, որովհետև Ամիր Փոլինն իր անունը մեջտեղ է դրել։

79.9 ի քնոյ մեղաց

81 ի քնոյ ի մեղաց

Պոտուրյանի ուղղումն հավանաբար տաղաչափությունը ճշտելու ցանկությամբ է ներշնչվել՝ ձեռագիրը մեկ ավելորդ վանկ ունի՝

Լեր պահպան /և հավանի/

և զմեղ զարթոյ /ի քնոյ (ի) մեղաց։

Առանց (ի) տաղաչափությունը 4-4-4-4 է։

79.9 յամեմ յունայն յեզոյն

81 յամեմ ունայն յեզոյն

Երկու տարբերություն կա՝ մեկը յունայն բառը, որի փոխարեն Պոտուրյանը ունայն է տպել (հմտ. վերև յայլ և յայլ)։ Մյուսը՝ յեզոյն ձեռագրում եղած յեզոյս-ի փոխարեն։

80.0 Բան

82 Բանք

Անհասկանալի է Պոտուրյանի բերած ուղղումը, որովհետև այլուր նա թողել է բանք՝ օրինակի համար երկրորդ բանաստեղծության սկզբում (Պոտ. 74)։

Նորին Կոստանդեայ բանք

¹ I. Karst. Historische Grammatik des kilikisch-armenischen. Strassburg. 1911, Berlin, 1970 (այսուհետև՝ HGKA), S. 396.

Ձեռագիրը մեկ-մեկ բան, մեկ-մեկ բանք ունի:

81.5 շատոնց

83 շատոց

Տարօրինակ է այս ուղղումը, քանի որ ձեռագիրը հաճախ շատոց ունի, որը Պոտուրյանը թողնում է շուղված:

83.7 ի վերայ

85 ի վարայ

Հետաքրքիր ձև է, որը կարող է ը առնմանություն լինի, քանի որ արևմտյան բարբառներում առաջին վանկի ձայնավորը արդեն X դարից առաջ ռեգուկ-ցիա էր կրում (Վայթընբերգ): Կոստանդինի մոտ կա նաև ի վրայ⁵: Աճառ-յանը⁶ ի վարայ չի տալիս:

83.13 խոնարհեցար

86 խոնարհեցար

Այս գրելու ձևը, միակը ձեռագրում, ցույց է տալիս, որ ճ-ն Բ-ից հետո չէր արտասանվում: Հ-ի անկումը (բառի սկզբում և միջում) հայտնի երևույթ է միջին հայերենում, ունենք, օրինակ՝ պաք (պահք), պասեն (պահսին), շնորքըն (շնորհքն)⁷: Տեսեք նաև ստորև, 101.15-ի ժանոթագրությունը:

84.15 ունինք

87 ունին

84.15 գընանք

87 գնան

Նույն տողում եղած բայերը բոլորը -նք ունեն: Տողերի նշանակությունից պարզվում է, որ այստեղ նույնպես պետք է -նք լիներ:

86.3 նուաղեցան

89 նուաղեցան

Ձնայած զ և ղ տառերը իրարից շատ շեն տարբերվում, բայց ալատեղ կասկած չի կա, որ այժմ (Գ-ի գծի եղծված լինելը պետք չէ ընդունել) ձեռագրում ղ է կարդացվում: Նուտղել բայի երկրորդ նշանակությունը ըստ Մալխասյանցի թուլանալ, նուաղել է, ուրեմն ձեռագիրը այստեղ ճշտվելու կարիք չի զգում⁸:

86.4 Արուսեկին

89 արաւսեկին

Ըստ ՆԲՀ 1,374 Արուսեկի անունը երեք ձևով է գրվում՝ աբուսեակ, աբուսեակ, որը նաև գրվում է աբաւսեակ: Պոտուրյանի ընտրած ձևի փոխարեն նախընտրում ենք ձեռագրի գրությունը, որովհետև նա նույն իրավունքն ունի: Պոտուրյանի ուղղումը քմահաճ է:

90.7 ուրախացաւ

94 ուրախացան

Նախադասության քերականությունը պահանջում է -ացաւ: Պոտուրյանի ուղղումն ընդունելի է:

91.0 զբանս, անպիտան

95 զբանս անպիտանս

⁵ Արմենուհի Սրապյանի հրատարակությամբ (Կոստանդին Երզնկացի. Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի. Երևան, 1962 (այսուհետև՝ ԿԵ), էջ 138 տ. 7, 141 տ. 38):

⁶ Հ. Աճառյան. Հայերեն արժատական բառարան, հ. I—IV, Երևան, 1971—1979 (այսուհետև՝ ՀԱԲ), IV, 331:

⁷ Ակնարկներ միջին դարկան հայերենի պատմության. հ. Ա, Երևան, 1972 (այսուհետև՝ ԱՄՀ 1), էջ 148—149:

⁸ Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան չորս հատորով. Երևան, 1944, հ. 7, 482բ:

—ս ձևադրում լավ չի կարգացվում, որովհետև տեղը եղծված է։ Այսուամենայնիվ կասկած չի կա՝ «ն ե ն»-ի միջև ուրիշ տոտ կա, որը կարող է լինել միայն ս։

91.3 ատեն

95 ատել են

Պոտուրյանը մեկ վանկի պակասությունը զգալով հրատարակել է՝

Ատեն ըզմարդըն իմաստուն, յիմար կոչին ու ծուռ ճանփով

Ի՛զմարդըն երևք վանկ ունի, 3-4-(4-4) տաղաչափությունը պահպանելու համար։ Ատեն փոխելով ատել են զմարդըն պիտի կարգացվի որպես երկվանկային բառ՝ ըզմարդն կամ զմարդըն։ Երկուսն էլ հնարավոր են։

95.17 դատարկ

101 դարտակ

Տողը վերջանում է բառի միջում, դատ—։ Հաջորդ տողը սկսվում է —ակ—ով։ Դուրս մնացած ր տառը դատ—ի վերև է ավելացված, ճիշտ ա և տ միջև։ Այսպիսի դրափոխությունը միջին հայերենի բարբառների մի հայտնի երևույթ է։ Դատակ ձևը հանդիպում ենք նաև Ներսես Շնորհալու, Մխիթար Հերացու և Հովհաննես Երզնկացու մոտ։ Վերջինիս մոտ գտնում ենք՝ «Այն ճիւղն, որ զպտուղն ունի, քան զդարտակն ի բաց կու կենայ»⁹։

97.0 չէ աշակերտել

103 չէ աշակերտել շատ

Տեքստի մեջ Պոտուրյանը շատ բառը չի գրում, բայց նույն գրքի էջ 11-ում նա այս տողերը բերում է շատ բառը բաց չթողնելով։

98.3 նենգով ինձ լինայ

104 նենգով ինք ինձ լինայ

Տաղաչափությանը համաձայն պիտի ինք պահպանված լինի, նրա դրելով տողի տաղաչափությունը կդառնա 2-4-4-4։

ով գող /է այն գանձիս,/

ով եամ նենգով /ինք ինձ լինայ

98.3 և ինք

104 ու ինք

Տաղաչափությունը ճշտելու նպատակով Պոտուրյանը ու փոխարեն և է տպել։ Տողի տաղաչափությունը 3-4-4-4 է։

98.4 երբ

104 երբի

Պոտուրյանը չի ուղղում, որովհետև էջ 159 թողնում է երկու ձևը։ Այստեղ էլ պիտի երկու տպված լինեին։

98.5 չկարցի հարցանել

105 չկարցի ես հարցանել

Պոտուրյանը ես բաց է թողել նրա նախորդված տաղաչափությունը պահելու նպատակով՝ այդպես տողը կկարգացվի 3-4-4-4։ Չնայած բանաստեղծության տաղաչափությունը ըստ Պոտուրյանի կամ 2-4-4-4 կամ 3-4-4-4 է, մենք ես բառը չենք սղում, այն պատճառով, որ ընդհանուր օրենքով տողի առաջին ոտքը կարող է ունենալ ցանկացած երկարություն՝ 1-ից 4 վանկ։

101.15 ըզյիմար

108 զիմար

Գրիչը գ և ր բաղաձայններից հետո հ չէր արտասանում, մի երևույթ, որ միջին հայերենում տարածված է եղել։ Հ. Դ. Մուրադյանը¹⁰ հետևյալ օրինակներն է բերում։

⁹ ԱՄՁ 1,161։

¹⁰ ԱՄՁ 1,148—149 § 80։ Հովհաննես Երզնկացի. Հրատարակեց Արմենուհի Սրայյան. Երևան, 1958, էջ 151։

Հովհաննես Երզնկացու ոտանավորներից՝

Այն մարդն որ աստայ նորա ...
չաւտամ թէ նա խելք ունի,
աւտա որ խիստ յիմար է

Կոստանդի. Երզնկացի (ԿԽ, 162)՝

Թէ ղիս պէռւմէտ թողուս,
չաւտամ թէ այլ ղիս տեսնուս

104.10 ի յիր տեսոյն

112 ի յիր տեսոյն

Եթե Պոտուրյանի հետ համաձայնենք, պիտի ընդունենք, որ այստեղ ղրիշը սխալ է թույլ տվել: Չնայած դա չի բացատրում, բայց մի ուրիշ, ավելի նշտ-նակալի բացատրություն էլ կա: Ի նկատի ունենք իւր բառի փոփոխությունը միջին հայերենում, իր դառնալով¹¹: Իր ձեռն հենց ստացական դերանունն է: Կարոտը¹² իր տալիս է որպես անկախ ստացական դերանուն, իսկ Հովսեփ-յանը¹³ իւր է ընդունում որպես ստացական դերանուն: Նա իր միայն որպես անձնական դերանվան սեռական և տրական հոլովներ է ցույց տալիս: Այ-նուամենայնիվ ձեռագրում օգտագործված իր բառը ընդունում ենք որպես վստահելի ձև, և նախընտրում ենք նրա պահպանումը: Այս պատճառով առաջարկում ենք առղը կարդալ հետևյալ ձևով՝

ոմանք չեն արժանի
ի յիր տեսոյն կան հալածել:

այսպես միջին հայերենի ձևը վերականգնելով:

105.12 նոյնովն

112 նոյն:ոյնովն

Պոտուրյանը այս ուղղումը նշում է ծանոթագրության մեջ: Աստվածաշունչը ունի՝

Մատթ. է. 2 և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ:

Մարկ. Դ. 24 և որով չափով չափէք, նովին չափեսցի ձեզ:

Ղուկ. Զ. 38 նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ:

Նույնովն սովորական միջին հայերենի ձևն է, գրաբարի նովին փոխարեն: Գրիշը այստեղ սխալվել է՝ նույննովն գրելով:

107.3 յերեր

115 յերէր

Ուղղումը նշված է ծանոթագրության մեջ:

108.5 քեզ

115 ձեզ

Ամբողջ բանաստեղծությունը, ինչպես նաև նախորդը, որ նրա հետ պիտի կարդացվի, եզակի երկրորդ անձին է դիմում, ոչ հոգնակի, դրա համար Պոտուրյանը ճշտորեն քեզ է տպել:

112.4 մարդկան

119 մ դ կ (մարդիկ)

Նախադասությունը ձեռագրում այսպես է՝

Ի ի նորայ պայծառ տեսուն՝
որգիք մարդիկ ի մեզ հային:

Պոտուրյանը ուղղում է մարդկան տպելով, որը կախված է որդիք (ուղղական հոլովում) բառից: Դա Աստվածաշնչի սովորական արտահայտությունն է:

¹¹ HGKA p. 67, § 74.

¹² Նույն տեղում, էջ 229.

¹³ ԱՄՂ 2,98.

Որդի՛ մարդիկ կոսպակցությունը գրաբարում է անհնար, բայց ոչ միջին հալերենում: Այդ ժամանակաշրջանի հայերենում հնարավոր էր երկու ուղղական հոլով իրար հետ կապել: Այդ դեպքում առաջինը ընդունվում է որպես երկրորդի որդի, կամ երկրորդը որպես առաջինի բացահայտիչ: Նկատի ունենալ այնպիսի դեպքեր, ինչպես Շաբաբ ու շիրին շրթունք (ԿԵ, 161) կամ երբ ու հեշեց հսղմն հաբալ (ԿԵ, 118): Այստեղ ունենք երկու ուղղական հոլով իրար հետ կապված: Հետագայում որոշիչը գրաբարի նորման էր, միջին հայերենում շթեքված նախադասությունը նորմա է դարձել¹⁴:

113.6 դինչ

120 զինչ

Նախնականությունը մեջ Պոստուրյանը սխալաբար գրում է թե ձեռագիրը ինձ ունի: Էջ 114 նա երկրորդ ծանոթագրությունը սխալ բառի մոտ է գնում, նրա ղեկավարությունը վերաբերում է էջ 113-ին գտնվող վերանիս:

115.10 ի վրայ

121 ի վերայ

Պոստուրյանը ծանոթագրության մեջ նշում է, որ ձեռագիրը ի վերայ ունի: Վերայ գրելով դրիչը տողին մի ավելորդ վանկ է տվել: Վերջին ոտքը կունենալու հինգ վանկ՝

սէր է վարդին ու սէր բլբուլն//
սիրով նստել ի վերայ վարդին.

Ի վերայ վարդին ունի հինգ վանկ: Եթե վերայ-ի մեջ եղած ե-ը սղվի, կըստանանք ի վրայ վարդին, այսինքն չորս վանկ և տողը կունենալ 3-4-4-4 տաղաչափությունը:

117.13 ի ի լուսոյ արեգականն՝ 123 ի ի լուսոյ արեգականնէն
Սա ժողովեմ գեղեցկությունն:

Ձեռագիրը ունի արեգականն, որի վրա գրել է էն: Բառը պիտի կարդացվի արեգականնէն, մեկ ն-ով, բայց այսպես երկու անգամ բացառական հոլով ունենք: Հարցը հնարավոր է լուծել ընդունելով, թե գրիչը ի նախդիրից հետո կարիք էր զգում բառը -է վերջավորությամբ գրելու, բացառական հոլով արտահայտելու համար, քանի որ -ոյ վերջածանցը ավելի տարածված էր որպես սեռական-տրական հոլովների նշան: Այդպես նշանակությունը փոխվում է, լուսոյ ընդունելով որպես սեռական-տրական հոլով: Այնուամենայնիվ կարծում ենք, որ Պոստուրյանի ձևը լավագույնն է:

121.4 դինուրքն

126 զինաւորքն

Տողը ստանում է մեկ վանկ ավել և դառնում է 4-4-4-4, տողերի մեծամասնության նման: ՆՔՀՂ 1,735 բ գրում է՝ զինուոր ... ու և զինուոր: ՄՀՔ1, 216 բ օրինակ է բերում Վարդանա առականից (Ժողովածոյը Վարդանայ առական. Մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 330)՝ «Որպէս ոմն զինաւոր յոյժ ջերմացեալ ի սէր և ի փառք աշխարհիս»:

121.4 (զինուորքն) են

126 ին

121.4 (պահապանքն) են

126 ին

Ին ձևը են-ի փոխարեն նաև Կոստանդինի մի ուրիշ տաղում կա (ԿԵ 127, տ. 38)՝ «Որ շատոր ին ցանգացել, բայց քիչը հասան առաւօտուն»: Բայի տարբեր ձևերում հանդիպում ենք ի՝ է կամ էի փոխարեն, օրինակ՝ պագի պագէի փոխարեն (ԿԵ, 188 տ. 19) կամ ի էի փոխարեն (ԿԵ, 190 տ. 42):

121.6 տերեւներս

127 տերեւնիս

Հոգնակիի այս սուտ ձևը - ներ Կոստանդին Երզնկացու մոտ միակ վկայությունն է, որի մեջ Կոստանդինի մոտ - ներ հոգնակի չկա¹⁵, - նի հոգնակի Կոստանդինի մոտ հաճախ ենք հանդիպում: Հովհաննես Երզնկացու մոտ երկու անգամ ենք հանդիպում - ներ հոգնակիի ձեռք, նույն ընդհանուրության մեջ՝ սարգավազներ և հաբերաներ (ՀԵ, 165 տ. 35, 36):

124.11 ի սիրոյն

129 ի (յայն) սիրոյն

Ձեռագիրը լուսանցքի մեջ ունի յայն, ինչպես նաև Պոտորյանը նշում է ծանոթագրության մեջ, Առանց յայն բառի կունենայինք հետևյալ տողը (տաղաչափությունը 3-4-4-4):

Քեզ պարտ է մեծ յուսով ի/
սիրոյն խնդրել /քեզիկ բաժին

ընդունելով, որ ի առաջին կեստողին է պատկանում, Եթե յայն տողի մեջ գրենք տաղաչափությունը կլինի 4-4-4-4՝ տողերի մեծամասնության նման և կստանանք հետևյալ տողը՝

Քեզ պարտ է մեծ /յուսով ի յայն/
սիրոյն խնդրել /քեզիկ բաժին

125.3 Եւ Տէր կենաց

130 Եւ Տէր կենաց

Եւ բառը այստեղ նշանակություն չունի: Տունի հավասարակշռությունը խախտվում է եւ-ը եւ փոխելուց, որովհետեւ ամեն տող եւ բառը ունի: Ամբողջ տունը Աստծո էական հատկություններն է շեշտում: Պոտորյանի ընթերցումը ընդունելի չէ:

126.8 Եւ

132 ի

Տողը այսպես պիտի կարդացվի՝

Ի յանդադար շրջագայից

127 13 և 14 միջև՝ տունը բաց է թողել 133 (տեսեք ստորև)

Գոյնն ի քէն է գեղն ի քէն է:
Համ ու հոտ անուշն ի քէն է:
Պայծառութեան տիպն ի քէն է:
Ջնոսայ փառաք պատվող դու ես:

Տաղաչափությունը և մենահանգր ճիշտ են՝ 4-4 և դու եւ վերջացվող շորորդ տողով:

127.16 այս քեզ ունիմ

134 առ քեզ ունիմ

Ձեռագրի մեջ ա և ո միջև տեղ չկա յ գրելու համար: Ու-ի ստորին մասը լրիվ բաց է, անհնար է կարդալ ս: Աղաղակ ունենալ պիտի միջին հայերենի տարբերակ լինի, աղաղակել-ու նշանակությամբ, ինչպես գրաբարում ունենք (ՆԲՀ 1, 32բ) աղաղակ բառնալ, -դենել, -առնել, -հաղկանել, -տալ, որոնք բոլորը աղաղակել են նշանակում:

129.3 չլինել

136 չլինիլ (կարճամիտ)

129.3 չլինել

136 չլինիլ (մարմընոյս)

Ի ուղղագրությունը ե-ի փոխարեն բայի մեջ հաճախ ենք հանդիպում Կոստանդինի մոտ (տեսեք վերև, 121.4):

129.5 նստեալ

136 նստել

130.8 հասեալ

137 հասել

¹⁵ Ջեյկու է ԱՄՂ 2, 57 բերած այս բառը:

Պոտուրյանը վերջին երկու դեպքերում սխալաբար ընդունել է արտասանության նշանը որպես համառոտագրության նշան:

132.22 դիրութին

141 դուրութին

Միջին հայերենում տարածված էր իւ>ու փոփոխությունը: Օրինակներ բերում է Հ. Դ. Մուրադյանը, ամենահինը 1058 թ. հիշատակարանում՝ «աստուած թողու զուր (<գիր) զյանցանքն»¹⁶, Դուրութին ձևը ունի նաև Մխիթար Հերացին՝ «Հիւանդին մարմինն հետէն թեթևութին և դուրութին լինի»¹⁷ (ՄՀԲ 1,182): Կոստանդինի մոտ (ԿԾ 192) կա նաև դուրանայ ձևը՝ կամ դուրանայ կեանքս դժար:

132.22 մի խարի

141 մի խարի

Պոտուրյանը միջին և ժամանակակից արևմտյան հայերենի սովորական ձևն է տպել, չնայած Վերջացող ձևերն էլ հաճախ են հանդես գալիս միջին հայերենում: Կարիք չկա ձևագրում եղած ձևը փոխել ուրիշի հետ: Անթույանի մոտ Վերջացող ձևերի բազմաթիվ օրինակներ կան Ֆրիկի դիվանից և Կոստանդին Երզնկացուց¹⁸:

134.11 ծիծեռն ի հետ

144 ծիծեռնի հետ

Հնարավոր է նաև այսպիսի ուղղագրությունը՝ ծիծեռնի հետ, ի ընդունելով որպես սեռական հոլովի վերջածանցը¹⁹:

135.19, Մ2 ի բան գըտվիր

146 ի բանդ տվիր

Պոտուրյանը տեքստը տպել է ձևագրի համաձայնությամբ, նրա ծանոթագրությունը ավելորդ է՝ ձևագրի ընդհանրացումը:

140.7 զհոտ

153 զհոտտ

Ձևագրի բնօրինակ է, բայց պարզ է, որ հ-ից հետո տառի սկիզբը կա: Դա մեր կարծիքով ու-ի առաջին մասն է, որին հետևում է փոքր դատարկ մասը: Հետո ու-ի նման նշան կա, որը առաջին տ-ի երկրորդ մասն ենք համարում: Վերջապես (երկրորդ) տ կա: Այսպես ստանում ենք զհոտտ բառը: Քերականության օրենքները չեն խախտվում և Վերջացողություն ունի, քանի որ խոսքը վարդի բուրմունքի մասին է: Առաջարկում ենք տողը կարդալ հետևյալ ձևով:

Այսօր խօսի բլբուլն համով
որ զհոտտ առ ինք բուրեն քամով:

141.14 երթայ

155 դառնայ

Նույն բառը -եքթայ- նախորդ տողում կա:

142.17 լըսեցիր

155 լսեցեր

Պոտուրյանը դրել է ուշ միջին հայերենի ձևը, մինչդեռ ձևագրի վաղ միջին հայերենի (գրաբարի նման) ձևը ունի: Ձևագրի ձևը փոխելու կարիք չկա²⁰:

143.3 պիղծ

157 պեղծ

¹⁶ ԱՄՀ 1,105:

¹⁷ Բ. Ս. Ղադարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Երևան, 1987, էջ 182:

¹⁸ ԱՄՀ 1,358—359:

¹⁹ Տե՛ս ԱՄՀ, 1,439—440, հետ կապի մասին:

²⁰ Կարևոր դրում է. «-եց- կամ -աց- մասնիկով կաղմված կատարյալ անցյալի եզակի երկրորդ դեմքը կիլիկյան հայերենում դեռ -եք, -ե- ձայնավորով ունեն, չնայած ուշ կիլիկյան հայերենում արդեն հանդիպում ենք -իւ վերջավորությանը»:

10 «Հանդես», № 1—2

ՆՐՀՀ 2,648 տալիս է նաև պեղծ և պիղծ ձևեր որպես տարբերակներ²¹:

143.4 գոհար

157 գահար

Գոհար բառը տարբեր ուղղագրություններ ունի հայերենում, ՆՐՀՀ 1,567-ում ունի գոհար, գրի և գահար, գոհար, գուհար: Նույն տողում երկու անգամ հանդիպում ենք ջոհար, որը նույնն է (նաև գրված ջոհար, ճոհար, ճուհար, ճոհար, ԱՄՀ 1,268): Պոտուրյանի ուղղումին հետևելու կարիք չենք զգում:

144,7 և (հեզ հոգի)

158 կամ

147.2 եար

162 իար

Պոտուրյանը ծանոթագրության մեջ նկատում է թե ձեռագիրը ի ար ունի, բայց տառերի միջև դատարկ տարածություն չի նկատվում փաստը թույլ չի տալիս եզրակացնելու, թե երկու առանձին բառերի հետ գործ ունենք:

151.9 նայ

167 վայ

Ծանոթագրության մեջ Պոտուրյանը ասում է, թե վայ իմաստով անհարմար է: Մենք այսպես չենք կարծում, որովհետև վայ այստեղ որպես ձայնարկություն հարմար է՝

Իր էրկանն չէ պակաս ինք սատանայ

նայ չթողու զիր ամէն կենքն որ դուրանայ

վայ ի տուն է թէ ի դուրս կամ ուր լինայ

թէ աշօքն այլ տեսնէ՝ թէզ մ' ուրանայ:

Այդ պատճառով էլ ընդունում ենք ձեռագրում գրվածը:

152.21 իր տունն

171 յիր տունն

Մեզ թվում է, որ Պոտուրյանի ուղղածը ընդունելի է, որովհետև յ-ն այստեղ իմաստ չունի՝

և իր տունն ըղորդ սրտով մեծ յոյս ունի

և ի մէջ ժողովրդեան պարծենայ լի:

153.24 ուր

172 վուր

ու→վու- փոփոխության Կոստանդին Երզնկացու մոտ միակ օրինակն է, դրա համար պիտի պահպանվի հրատարակության մեջ:

153.0 Բան Կոստանդեայ

172 Բան ի Կոստանդեայ

Պոտուրյանը ի նախդիրը չի գրում, և Կոստանդինի անունը գրում է ոչ ը-այլ ա-ով:

154.2 նայ համարի զամէնն ոչինչ

173 նա չհամարի զամէնն ոչինչ

154.4 և համարի զինքն ապիկի

174 և չհամարի զինքն ապիկի

158.3 նայ համարի յիսնէ խեցատ

178 նայ չհամարի յիսնէ խեցատ

Պոտուրյանը իր ուղղումները նշում է ծանոթագրության մեջ: Գրիչի երեք անգամ նույն սխալը թույլ տված լինելու ենթադրությունը ինձ հավանական չի թվում: Ավելի շուտ շարահյուսությունը թույլ է տալիս ժխտական ձևը օգտագործել այնպիսի բայերի հետ, որոնց խնդիրը արտահայտում է ժխտում, ներկա չլինելու գաղափարը: Ժխտված բայ գտնում ենք նաև, երբ բայը արտահայտում է վախի, հույսի կամ ցանկության գաղափարները: Դրանից մի օրինակ գտնում ենք XIII դարի ձեռագրի մեջ՝

²¹ Նաև՝ ԱՄՀ 1,81:

(Յղարկեց ի հետ թէ տուր զփախստականդ)
Նա վախեցին որ Թաթարն չլցուէր յերկիրս՝ տուին²²:

155.6 երբ	175 երբ
156.9 երբ	176 երբ

Հմմտ. Պոտ. 98.4, 9.104, նույնը, բայց նույն տունի մեջ կա նաև երբ: Ձե-
ռագրում 180 էջին հանդիպող երբ-ը Պոտուրյանը անսպասելիորեն պահում
է երբ ձեռք (Պոտ. 159.8):

156.11 դապուլ	176 դապուլ
---------------	------------

Ղապուլ բառը արաբերեն է, որը անցել է նաև պարսկերենին: Երկու լեզու-
ներում վերջանում է լ-ով, հայերենում սովորական ձևը ղապուլ-ն է, և
ղապուլ կա²³:

157.12 մի նայել	177 մի նայել
Հմմտ. վերև, 129.3:	

157.1 կենայ	178 կ կենայ
-------------	-------------

Առաջին կ պարզ է կարդացվում:

157.1 եար	178 իար
-----------	---------

Հմմտ. 162 (Պոտ. 147.2), նույնը:

159.7 աստենիս	180 աստենիս
---------------	-------------

Պոտուրյանը ձեռագրի ձևը նշում է ծանոթագրության մեջ:

159.8 հոգոյդ	180 հոգոյդ
--------------	------------

Հիշատակարանում Պոտուրյանի մոտ մի բառ է պակաս՝ էջ 10, տ. 2, բռ-
լորից բառից հետո պետք է ավելացնել համայնից:

2. ռ-քնմաները

Հատուկ ուշադրություն է պահանջում Պոտուրյանի արած ռ-քնմաների
հոլովման ուղղագրությունը: Նա հաճախ -ոյ է տպում, որտեղ ձեռագիրը
-ոյ ունի, ուրեմն դասական գրաբար է գրում աշխարհագրի, միջին հայե-
րենի փոխարեն:

Պոտուրյան	Ձեռագիր
97.2 հոգուլ	103 հոգուլ
97.2 հոգուլ	104 հոգուլ
128.1 հոգույն	135 հոգույն
129.6 հոգուլ	136 հոգուլ
132.22 որդույն	141 որդույն
144.5 հոգույն	158 հոգույն
148.5 ղհոգույտ	164 ղհոգույտ

3. գոր և որ-ի գրությունը

Պոտուրյան	Ձեռագիր
67.15 որ	64 գոր
67.16 որ (հրաման...)	64 գոր
68.18 որ	65 գոր
71.31 որ	70 գոր

²² Ա. Այաբյան. Քննական քերականություն աշխարհագրար կամ արդի հայերեն
լեզուի. 2.99 երևան 1987=Վիեննա 1866:

²³ ԱՄՂ 1,130—131, § 61բ և էջ 264ա: Տախերի ուղղագրությամբ տե՛ս ՄՀԲ1,327 (խա-
պուլ), ՄՀԲ 2,68:

Պոտուրյանը ծանոթագրության մեջ (67, ծ. 2) նշում է, թե ձեռագիրը զուրունի՝ «այսպես ստեղծ», գրում է նա:

Բոլոր այս վկայությունները գտնում ենք առաջին բանաստեղծության մեջ, «Օրհնեալ է Հայրն անըսկիզբն»՝ առաջին տողով: Արդյո՞ք կրոնական բովանդակությունը չէ, որը Պոտուրյանին ներշնչել է բանաստեղծությունը մաքրել միջին հայերենի, այսինքն ռամկական լեզվի ազդեցությունից: Միջին հայերենում զուր հաճախ ենք հանդիպում, երբ գրաբարում ուր կսպասէինք²⁴, Պոտուրյանը նորից գրաբարյան ձևն է նախընտրում, ի վնաս բանաստեղծի լեզվին: Նման դեպքը կա ձեռագրի 84-րդ էջում, ուր գտնում ենք զևայ: Պոտուրյանը տպում է նա (81.6):

4. -ն հոգի գրությունը

Ուշագրավ են Պոտուրյանի մոտ -ն հոգի ներկա կամ բացակա լինելու պատճառները: Հաճախ, ի տարբերություն ձեռագրի, նա -ն բաց է թողնում, սակայն մի անգամ -ն տպում է, երբ ձեռագիրը ոչինչ չունի: -ն-ի անկումը (ոչ հոգի, այլ բառի վերջին տառը) սովորական երևույթ է միջին հայերենում: Կոստանդին Նրզնկացու մոտ դրա համար բազմաթիվ վկայություններ կան: Այստեղ տալիս ենք ձեռագրի և Պոտուրյանի հրատարակության միջև եղած տարբերությունները²⁵:

Պոտուրյան	Ձեռագիր
65.7 ըզմարդ	60 զմարդն
67.15 որդիք	64 որդիքն
67.15 մին	64 մինն
68.20 յանապատի	66 յանապատին
71.30 ինքն	70 ինք
77.4 ինքն պատրաստել	79 ինք
78.6 յինքն	79 յինք

Միայն այս երեք անգամ ձեռագիրը առանց -ն-ի է և Պոտուրյանի մոտ -ն-ով: Դա ցույց է տալիս ինքն բառի կրած փոփոխությունը միջին հայերենում, և ոչ թե -ն հոգի բացակա լինելը:

86.5 ի ծագել	89 ի ծագելն
89.3 յարեգական	92 յարեգականն
89.4 յարեգական	93 յարեգականն
89.4 յարեգական	93 յարեգականն
90.6 յարեգական	93 յարեգականն
90.8 արեգական	94 արեգականն
90.9 յարեգական	94 յարեգականն
91.2 հանգրստութիւն	95 հանգրստութիւնն

Ձեռագիրը այստեղ, ինչպես միշտ, -ութիւն համառոտագրությամբ է տալիս՝ թ-ի ձևով: Երբ -ն է ավելացրել դա նշանակում է, որ -ութիւնն պիտի կարդացվի, որը սակայն այստեղ իմաստ չունի՝ նախադասությունը հետևյալն է՝ «Ես չունիմ հանգրստութիւն»: Այդ պատճառով Պոտուրյանի դրությունը մեկ -ն-ով այստեղ նախընտրելի է:

92.5 յիրմէ	96 յիրմէն
156.9 լիութիւն	176 լիութիւնն

Ձեռագիրը ունի լիութիւն, կկարդացվի լիութիւնն:

²⁴ HGKA, 245, § 304: Այստեղ ունենք օրինակներ, որ ցույց են տալիս թե նույն զուր բառը օգտագործվում էր մարդկանց համար:

²⁵ Տե՛ս նաև ԱՄՂ 1,146—148 § 79:

5. -ը- գրությունը

Պոտուրյանը հաճախ ը տառն է գրում, որը ձեռագրում չի նշված: Պատճառը պարզ է, ը մտցնելով հրատարակողը հեղտացնում է տաղաչափության ճիշտ ընթերցումը: Մեր կազմած ցանկում միայն այն բառերն են բերված, որոնք ձեռագրում ը ունեն, իսկ Պոտուրյանի մոտ առանց ը տառի են հրատարակվել:

Ձեռագիր	Պոտուրյան
62 ի դրրախտին	66.11
67 ըրնակի	69.23
68 մրկրտի	70.26 (մրկրտի)
68 արտաքըս	70.27
69 արտաքըս	70.29
69 քահանայսըն	70.29
83 ինքըն տրխմար	81.4 ինքըն տրխմար
89 դուրըն	86.5
95 խորհըրդով	91.2
96 ըզքեզ	92.4
99 երկրնչի	94.11
99 սըրով	94.11
99 սըրով	94.13
100 սըրտի	95.14
107 մըտայ	100.12
133 փառս	127.15
134 հայրըդ	128.19
139 շըքար	131.14
140 ը-ռումր	131.18
144 հաւերըտ	134.11
	(Պոտ. ունի -տ)
144 արտուտիկըն	134.11
145 ծաղկընին	135.15
147 զվարդըն	136.25
147 դասըս	136.26
148 սիրտըտ	137.31
	(Պոտ. ունի -ա)
150 աչիցըն	139.39
152 բլբուլըն	140.5
153 շաքարֆըրուշ	140.8
157 սիրտըն	143.5
158 բազըմեի	144.6
158 կերպարանըս	144.6
158 զձայ-նըն	144.7
162 հանգըստութիւն	147.1
163 խըրատ	148.4
163 թըւաքար	148.5
171 ըղորդ	152.21
171 ժողովըրդեան	152.21
176 մըտաւք	156.11
177 մըտիկ	157.12
178 դըռուի	158.3
178 դըռուին	158.3

6.1 -յ գրությունը

Պոտորյանը -յ բաց է թողնում ահա և նա բառերում: Չորս անգամ ձեռագիրը -յ շունի, իսկ Պոտորյանը, ընդհակառակը, տպում է այդ տառը, չնայած պատճառը հասկանալի չէ: Նա չի բացատրում թե ինչու է մեկ տեղ բաց թողել և մյուս տեղ մեջ բերել ձեռագրի մեջ չհանդիպող երեք վոյթները: Ահա նրանց ցանկը՝

92.5 նալ	96 նա
139.0 եղալ	151 եղա
152.21 պարծենա(յ)լի	171 պարծենալի

տողը այսպես է՝

Ով կնոջ սուրբ և բարու ինք հանդիպի
 Նալ իր տաճ է պարծանաց թագաւորի.
 և իր տունն ըղորդ սրտով մեծ յոյս ունի
 և ի մէջ ժողովրդեան պարծենալի:

Պոտորյանը պարծենա ընդունում է որպես բայի եղակի երրորդ դեմքը և (յ) է ավելացնում: Այս դեպքում լի կարդացվում է որպես առանձին բառ, ինչպես նշանակությամբ:

156.11 Կոստանդեայ	176 Կոստանդեա
157.3 նալ	178 նա

Մնացած դեպքերում Պոտորյանը -յ չի տպում: Նա տպում է նա²⁶ հետևյալ տեղերում (առաջին համարը՝ Պոտորյանի հրատարակության էջը և տունն է, երկրորդը՝ ձեռագրի էջը)՝
 68.21—66, 69.23—67, 80.3—83, 81.4—83, 81.6—84 (2 անգամ, երկրորդը զնալ), 82.7—84, 100.9—106, 101.13—108, 113.6—119:

Պոտորյանը տպում է ահա, ձեռագիրը ունի ահալ հետևյալ դեպքերում՝
 68.21—66, 77.5—79, 89.4—93, 131.14—137, 137.30—148, 138.34—149:

Մնացած տարբերությունները վերաբերվում են հետևյալ դեպքերին՝

81.6 նորա	84 նորալ
97.0 սա	103 սալ
98.5 ասա	105 ասալ

Նա(յ) բառի ուղղագրությունը իր տարբեր իմաստների պատճառով չի տարբերվում: Բոլոր եղած նշանակությունները ծագում են նույն ձևից, որը դասական գրաբարում նալ (սալ, դալ) էր գրվում:

6.2 -յԸ

Պոտորյան	Ձեռագիր
70.28 լուսանայր	69 լուսանար
71.32 դառնայր	71 դառնայր

Ձեռագիրը նաև -այր ունի: Երկու ձևն էլ կա ձեռագրում:

72.36 ընթանային	72 ընթանային
78.8 ճանապարհաց	80. ճանապարհաց

²⁶ Նա(յ) բառը միջին հայերենում: Աճ, ՀԱՐ 3,416—417, ԱԿՆ. 1,478—479, Այտ. 99, HIGKA, 22—23, § 8a, c. Նա հնդեվրոպական բառ է, որի արմատը *no- է, նշանակում է այն, և մանավանդ, արդ, արդեն իսկ (ՀԱՐ, III, 416—417): Անթոսյանը ավելացնում է, թե միջին հայերենում նա նաև նշանակում է և, որը Կոստանդին Երզնկացու մոտ հաճախ ենք հանդիպում:

83.11 հաճոյանայր
141.10 ալ

86 հաճոյանար
154 ալ

Բաւի խոնարհման ձևում -ալը սովորական գրաբարյան ձևն է: Միջին հայե-
րենում համապատասխանող ձևը -աբ-ն է, դրա համար Պոստոլյանը ձեռա-
դրի համաձայնությամբ պիտի թողնէր այդ ուղղագրութիւնը: Նույնն էլ վե-
րաբերում է ալ և այլ-ի ուղղագրութիւնը: այ>ա փոփոխութիւնն բազմաթիւ
օրինակներ կան: Երզնկայում 1201 թ. պատրաստված ձեռագրում կա հետե-
յալ նախադասութիւնը՝ «Եւ որ կարդաք և ընդօրինակէք»²⁷:

Լեթայնային և Ճանայպարհաց բառերում եղած -յ- լեզվի իրականու-
թյանը չի համապատասխանում և պետք է համարվի գրչի հիպերկորեկցիան:

6.3 -յ ձայնավորների միջև

Պոստոլյան	Ձեռագիր
66.11 հրամայեաց	62 հրրամահաց
124.10 աստուածային	128 Ածաին

7. -ա և -դ և այլ գրութիւնները

Քանի որ Պոստոլյանը միայն մեկ-մեկ դ գրելով ուղղում է ձեռագրի մեջ
եղած տ տառը, ցանկում նշել ենք բոլոր դեպքերը, որտեղ ձեռագիրը ունի
տ: Հրատարակիչը ամբողջովին չի հետևել նաև ձեռագրում գ և կ-ի միջև
եղած տարբերութիւններին: Այն դեպքերում, երբ Պոստոլյանը ուղղել է
ձեռագիրը, մենք նշել ենք ձեռագրի ընթերցումը:

Պոստոլյան	Ձեռագիր
66.11 կենացդ	62 -տ
84.14 զմեծդ	86 -տ
84.16 սրտիդ	87 -տ
84.16 ծովուդ	87 -տ
101.13 ընկալայ	108 ընգալայ
105.11 այդ	112 -տ
132.20 ցանկալի	140 ցանգալի

Հետևյալ դեպքերում ունենք ձ-ի, տ-ի և ս-ի փոխարեն՝

100.12 յանկարծակի	107 յանկարձակի
140.6 ըզսուլթան	153 զսուլտան
148.5 անըզգամի	166 անսգամի

8. -ու-, -ւ-, -վ-, -ըւ- գրութիւնը

63.2 պատուանդան	59 պատրւանդան
65.9 բանսարկուին	61 բանսարկւին
72.35 բանսարկուին	72 բանսարկւին
95.15 պատուով	100 պատվով
102.2 լեզուով	109 լեզվով
103.5 պատուել	110 պատուել
107.1 տըւեր	115 տվեր

²⁷ ԱՄՀ 1,91: Այ երկրորդադի կրած փոփոխութիւնների մասին ընդհանրապես՝ ԱՄՀ
90—94:

Պոստուրյանը իր ուղղումները նշել է ծանոթագրությունների մեջ:

127.14 լեզուովս	133 լեզվովս
130.9 արտասուօք	137 արտասվսուք
131.15 ոսկուով	139 ոսկով
140.4 դրուի	152 դովի
141.13 տըւել	154 տվել
143.4 պատուական	157 պատվական
145.2 պատուով	159 պատվով
146.6 տըւել	161 տվել
146.7 անուանրն	161 անւանն
151.12 լեզուանի	163 լեզվանի

Գրաբարյան ուղղագրությունը կա ձեռագրի էջ 170՝ լեզուին (Պոստ. 152.19), և նույնպես էջ 177՝ լեզ-ուովն (Պոստ. 157.13):

143.25 անուանս	172 անւան-ս
----------------	-------------

9. Եզրակացություններ

Հնդհանուր եզրակացությունը կլինի այն, որ հրատարակիչը պիտի լուրջ ընդունի ձեռագրի մեջ եղած միջին հայերենի դրսևորումները: Ուղղումները դեպի գրաբարի կամ ժամանակակից հայերենի նորմաները սխալ տպավորություն են ստեղծում հուշարձանի լեզվի մասին: Միջին հայերենը պետք է հրատարակվի ինչպես նրան գտնում ենք վստահելի ձեռագրերի մեջ, մանավանդ, երբ գրական լեզվի նորմաները բացակայում են: Այսպես կպահպանենք նաև զանազան բարբառների հարստությունները, որոնք ներկայացնում են հայերենի զարգացման ընթացքում կրած փոփոխությունները: Այսպիսի հիմքի վրա դրված հրատարակությունից ավելի վստահելի տպավորություն կստանանք միջին հայերենի մասին, քան ընդունելով, որ բոլոր այդ լեզվի հատկությունները պատկանում են ոչ բանաստեղծի՝ այլ գրչի լեզվին, ուրեմն պիտի ուղղված լինեն մի անհայտ նորմայի համաձայն: Դրանից մի օրինակ է հոգի ներկա կամ բացակա լինելը, կամ Ինքն տպել Ինք, ուրեմն գրաբարի ձևը միջին հայերենի ձևի փոխարեն: Մի ուրիշ օրինակ՝ ո-թեմաների թեքումը, որը ձեռագրի մեջ գտնում ենք միջին հայերենի ձևում (որդոյ, հոգոյ), մինչդեռ Պոստուրյանը վերականգնում է գրաբարյան ուղղությունը, հոգոյ և այլն ձևերը: Դրանից բանաստեղծության ոճը խիստ փոխվում է, և կարդացողը ստիպված կընդունի, որ Կոստանդինը դեռ օգտագործում է գրաբար, երբ խոսքը վերաբերում է Աստուծուն: Հնդհակառակը, պարզվում է, որ աշխարհաբարը բանաստեղծի կողմից նաև օգտագործված է ամենասուղը նյութերի մասին խոսելու համար: Տպավորությունը նույնքան սխալ կլինի, ինչպես եթե ընդունենք, որ Դանտեն իր Աստվածային կատակերգությունը լատիներեն գրած լինի:

Կոստանդինի նորահայտ քառյակի մասին այլուր ավելի մանրամասնորեն կգրենք: